

Montjoieի մէջ, այս մայրադուռը բարաւոր չունի: Մեծ կամարը ունի պորտի քար մը (clef), մինչ ճակատի պատուհանինը՝ կետրոնական կցուած մը: Ճակատը կը վերջանայ հորիզոնական գծով:

Տեղւոյն ներքին հաղորդակցութիւնները բարեխաւելու համար, ժԳ. դարու ընթացքին, ճակատը շինուած լայն սանդուխով մը մայրադուռը խափանուած է. այն ատեն դուռ մը բացած են առաջին գերանամէջին հարաւային պատին մէջ և պատըսպարած են զայն ծածկոյթի մը տակ, որ մեծ սրահին ծածկոյթին դիմացը կը գտնուի: Պէրութի և Գաղայի մայր եկեղեցիներու նման ցցանկիւն կամարով քառակուսի շէնք մ'է, եւ որ ունի պատշգամ մը: Հարաւային և արեւմտեան կողմը ան ունի երկու կորածեւ կամարներ՝ կետրոնական կցուածով եւ առանց զարդի:

Այս մատուռը մեծ նմանութիւն ունի Montjoieի նաւով եկեղեցիին հետ, և որ ինքնին վանքին նախնական մատուռը կը նըկատուի: Ան կը տարբերի Թորթոզի եկեղեցիէն իր պատերուն վիմաշարքովը. բայց այս մայր եկեղեցիին հետ ան ունի աչքի զարնոզ համանմանութիւններ, որոնք են. միւսոյն վիմագրական նշաններ, կամարներուն մէջ միւսոյն ուղղանկիւն պատուհաններ, կիսասիւններուն վրայ միւսոյն ճակատակներ, մայր գուռներու վրայ միւսոյն կամարաքիւղ և միւսոյն ձեւը բարաւորներու և Քէրէկի յատուկ պարուրազարդերու (boudin): Հաւանական կը թուի որ միւսոյն վարպետը ժԲ. դարուն վերջերը հսկած է երեք շինութիւններուն: Այս եկեղեցին 1271ին մզկիթի փոխուած է:

Բերդը կը պարունակէ քաղաքային ճարտարապետութեան երկու նշանաւոր մասեր, հարաւային արեւմուտք, բերդին տիրոջ տունը, և հարթավայրին դէպի կեզրոնը, մեծ սրահը:

Տունը ունի դիտանոց մը, ունի երկու սրահներ՝ վարի եւ վերի, ցցանկիւն կամարներով շինուած: Վերի սրահը ունի երկու կրկնակ պատուհաններ: Սրահին ծայրը արեւելքէն կապուած է կիսաշրջանակային աշտարակ մը որ կը պարունակէ ցցանկիւն կամարով շինուած ուղղանկիւն սենեակ մը. արեւմուտքէն կլոր աշտարակ մը սիւններով կապուած սրածեւ կամարազարդ սենեակով մը: Հինգթերթ կիսածաղիկ խորոփ (զարդ, cavet) մը կը շրջապատէ սենեակը և անոր արտաքին պատուհանը կը կրէ իր շրջապատին վրայ միւսոյն զարդարանքը: Կը թուի թէ այս աշ-